

ՕՐԴԻՆԱՐԻ ԿՈՒ ՎԵՐԻՆ ԸՆԴՈԿԻԼՈՒՄ

ՕՍՏԻԿԵՐԱԿԵՐՆ ԱՐՀԱՐ

THE YOUNG

፭፻፲፯

*See LUDWIG, p. 1.*

[www.horizon-mag.com](http://www.horizon-mag.com) | [Contact](http://www.horizon-mag.com/contact) | [Privacy](http://www.horizon-mag.com/privacy)

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԿԱՐԱՆ\*)

Գոզպինում նկատելի են երկը տիգզի տները, հիմնայի հայկական, միջին՝ պարսկական և նոր՝ եւրոպական։ Առաջին երկու տիգից այլքան չեն կառուցանում, ոչչ միայն նները կարգանելով գործածում են կամ պրակտիկական և կամ որպէս խոհանոց կամ պահանջանի տները։

Հին հայկականը զիմատուն կամ զարդարամն է, որ առաջ էլուսպէս յառաւել է Դարբարագին 1)։ Դիտելով այս սիզոյի կանգուն և տէկը անձերը, կարելի է նկատել որք աստիճաննարար զարգացումը, այսպէս՝ տմբեանին զիմատան ձեղունը յինւում է չորս սիւների վրայ, միջին ժամանակինը՝ երկու խոկ նորը՝ միմիայն մինի վրայ։ Այս վերջինն առասկի անձեր բազմաթիւ են առուելուապէս նույնիշնանի շրջակայ զիմուերամ Բացի որոնից նկատում է նուն,

<sup>a)</sup> See *Erg. Chemie* 1904 p. XI-12 abges.

<sup>1)</sup> Τα αρχεῖα των πατέρων μακρινών δικαιοδοσίων μένουν όλα σημαντικά και συντηρούνται από την Αρχή Δικαιοδοσίων της Ελλάς, παρατηρηθείσας από την Επιτροπή Συντηρητικού Δικαιοδοσίου της Ελλάς.

Կարուրական տեսչիւթիւն կարեց Խ համարում յիշել համ այն, որ Դադի-  
խում բարը տեսքը էլ ունի տառեկի պրատիգեստիք, մինչդեռ կույտարարու-  
թիկ տար զինքնամ (ինչպէս Հափառի, Թարալզեանց) մի երկու որաբաց  
հայրէ է պատճեմ:

որ փայտէ կամ կաւէ շտեմարանը, որ անհրաժեշտ կարասին է եղել այս տիպի բնակարանի, փոխանակ տան դռան մօտ շինուելու, ամփոփուել է գռան պատի մէջ, որ այս պատճառով մօտ երկու արշին լայնութեան է գռաել։ Եաեմարանի բերանը գտնուում է մի պարուանի<sup>1)</sup> մէջ, որ բացում է ձեղունին մօտ։ Պատի մէջ, ներքեսում էլ մի փոքրիկ անցք է թողնուած, փայտէ կափարիչով փակած, որտեղից հանում են շտեմարանի մէջ ածած ցորենը կամ ալիւրը։ Սըրորդ փոփոխութիւնը կայանում է նրանում, որ միշնատուն կոչուած սենեանը կիսազետնափոր գարձնելով գործածել են իրը մառան, որ առաւելապէս զինի են պահել։ Վերջերը՝ պարսկական տան ազգեցութեամբ շատ և մեծ պարհաններ և մի կամ երկու պատուհան են շինել զիշտան մէջ։

Միշին՝ պարսկական տիպի աները բազկացած են 3—4, երրենի և տեկի, սենեակներից, մառանից (մազազա) և բազդագուց (շուանե)։

Այս տիպի ընդհանուր, յատկանիշ կոզմը կայանում է նրանում, որ մեծ ջանը է թափուած հրբան կարելի է մեկուսացնել փողոցից։ Տները գտնուում են ոչ թէ ուզզակի փողոցի վրայ, այլ գութում։ Փողոցի առջեռվ ձգուում է կամ գութի կամ տան յետի կողմի, անպատճեան պատը։ Բացի սրանից նոյն իսկ գութի մէջ բացուող պատճեաններն էլ ծածկուած են շատ փոքրիկ բացուածքներ ունեցող փայտէ կամ երկաթէ շրջանակներով։ Գրեթէ բոլոր սենեակների մէջ կամ մի կամ երկու շարք պարհաններ, որոնցից մի բանիս ծառայում են որպէս պատճեաններ։ Առաջնակարգ սենեակների տառատաղը ծածկուած է զանազան ձևերով կարաստած մանր տախտակներով։

Նոր, եւրոպական տիպի աները լիովին չեն պատճեած պարսկական ազգեցութիւնից։ Սըրանցից շատերը նոյնապէս զանուում են գութում, կամ նրանց յետի մասն է գարձուած զէպի փողոցը։ Այս պատճեառով և ճարասարապեսութեան վրայ առանձին ուշազրութիւն չի գործուած։ Մըրանցից շատերն երկարիմնի են, բազկացած 3—5 սենեակներից, բաւական մեծ պատճեաններով և ընդորձակ պատշաճարով։ Շատ շատերի առաջ կամ պարուէզներ, որ ոչ միայն կամ պատճուու ծառեր, այլ և բազմագան ծաղիքներ։ Դեղեցիկ են, մասնաւանդ, խաղողի վազերով շրջապատուած հավանցները, որնք ամառը իրը ննջարան են ծառայում։

Կահաւորութիւնը կէս պարսկական, կէս եւրոպական է. աշ-

<sup>1)</sup> Պարհան կոչուում է պատի մէջ թողնուած բացուածքը, որ ծառուում է իրը պահարան կամ պարսկական ճաշակով գեղիքներին է առին։

քի բնկնող մասը կազմում են գործերը, որոնցից շատ հիմնալիներն ու թանգարիները կան:

### ԶԳԵՍ ԵՒ ԶՍՐԴ

Ա. Կանանց.—Զոկերի տառնենայաւառեկ զգեստն ու զիսի յարուցաները այժմ միմյանց պառանձներն են կրօւմ, Միջին սերունդը՝ վրացնուակ, իսկ նորը՝ եւրոպական տարազով է, հետեւովք և մի երկու տառնեակ տարիներից յետոյ այս տարազը ևս բոլորին գուրս կը դայ գործածութիւնից, տեղի տալով երոպականին:

Կանանց զգեստը շատ պարզ է և միանգամայն նման զարարացրիներին, Շապիկը երկար է, ուներից 3—4 վերշոկ բարձր, երկար թևերով և կուրծքին հասարակ կամ զար բափառ (սոկեթել ժապաւէն) կարած: Առուելապէս շիլա կամ զանաւուզ կտորից: Շապիկի վրայ հազնում են արխալուզ, չթից կամ մետաքսէ կտորից: Սա զրկելով բրանը, նույնով սեղմում է մէջքին և տոք լայն քղանցքներով իշխում մինչև նոկները, թեերը երկար են, և ծայրերին զար քայլած ու արծաթէ կոճակներ կարած, Մրա վրայից, մէջքին կապում են մնաւաքսէ կամ հստարակ կտորից զօտի: Ցուրս ժամանակ մի երկրորդ արխալուզ էլ հազնում են տառնոնի վրայ, իսկ հարուստները՝ թաւիշից կամ հասարակ կտորից կարած մուշտակ:

Փողոց գուրս վայիս և մանաւանդ եկեղեցի գնալիս ամբողջ ջովին փաթաթւում են սպիտակ շարսաւի (զօն) մէջ, ծածկելով նոյն իսկ երեսը: Պատաները չեն կրում այս չարսաւը:

Ուներին հազնում են գուլպայ և քոչ կանանչ կամ կարմիր:

Բ. Ցղամարդկանց.—Զոկերի հին սերունդը, մանաւանդ աղքատները, հազնում են տեղական, հին տարազով, իսկ նոր սերունդը, մանաւանդ հարուստները՝ նոր, երոպական տարազով: Վերին Ազգութիւնը անգական տարազ զրեթէ լիովին տեղի է տակել երոպականին, մինչդեռ միւս զիւզերում նա զե՞ն ևս յարաւեռում է:

Հին, սեղական տարազը կայանում էր հետեւալում: Շապիկը կարւում էր կասաից, կրծքի բացուածքը կոճկւում էր ունրակի մօտ, թեերը համանում էին մինչև զաստակը և այսակ կոճկւում: Մրա վրայ, ուներին հազնում էին շալուար շալից կամ հասարակ կապտագոյն կառայից, շալուարի վերին մասն ուշխուրով ամրանում էր, իսկ ներքին մասը, փեղքերը, դրւում էին զուրգայի մէջ և վերայից տողաղով կտպում: Շապիկի վրայից հազնում էին արխալուզ կապոյտ կտպուից կամ չթից և կամ զանա-